

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/4

12 փետրվարի 2013թ.

Քննարկվեց Քրիստինե Ներսիսյանի 24.01.2013թ. գրությունը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 11.07.2012թ. թիվ 2115130 ստուգման ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման վերաբերյալ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 18.06.2012թ. թիվ 2115130 հանձնարարագրի Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 11.07.2012թ-ին կազմվել է թիվ 2115130 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Քրիստինե Ներսիսյանի գրությունում մասնավորապես նշված է.

ես՝ Քրիստինե Ներսիսյանս, 2009-2012 թվականները զբաղվել եմ փոքր բիզնեսով: 11.07.2012թ-ին հոսանք չլինելու պատճառով ՀԴՄ-ի կտրոն չեմ տրամադրել հաճախորդին և տուգանվել եմ հարկային մարմնի կողմից: Ստուգման ակտը կազմվել է 11.07.2012 թ-ին, սակայն ինձ է ներկայացվել հաջորդ օրը՝ 12.07.2012 թ-ին: Այդ ամսաթիվն էլ ես համարել եմ հիմք տուգանքի վճարման համար: Ճիշտ երկու ամիս անց՝ 12.09.2012թ-ին, ես միանվագ կատարել եմ տուգանքի ամբողջական մարումը և ստեղծված ֆինանսական ծանր վիճակից ելնելով դադարեցրել եմ գործունեությունս 19.09.2012 թ-ից՝ հանել եմ գրանցումից ՀԴՄ-ն և դուրս եկել հաշվառումից: Վերջնական տարեկան հաշվետվությունները հանձնելիս Արաբկիրի հարկային տեսչությունում ինձ տեղեկացրեցին, որ ստուգման ակտով առաջադրված տուգանքը կրկնապատկվել է, քանի որ այն պետք է մարվեր ոչ թե 12.09.2012 թ-ին, այլ՝ 11.09.2012 թ-ին: Ստեղծված թյուրիմացությունից ես գտնվում եմ հուսահատ վիճակում: Մինչ այսօր ես գործազուրկ եմ և ունեմ փոքր երեխա:

Քրիստինե Ներսիսյանը խնդրում է քննարկել ստեղծված իրավիճակը և հարցին տալ դրական լուծում:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Քրիստինե Ներսիսյանի և Արաբկիրի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ Քրիստինե Ներսիսյանի գրությամբ բերված պահանջը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 18.06.2012թ. թիվ 2115130 հանձնարարագրի Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 11.07.2012 թ-ին կազմվել է թիվ 2115130 ստուգման ակտը: Ստուգման ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ստուգման ակտը Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանին ներկայացվել է 12.07.2012 թ-ին, որի վերաբերյալ ստուգման ակտում կատարված է համապատասխան գրառում:

Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանը ստուգման ակտով առաջադրված տուգանքը վճարել է 12.09.2012 թ-ին, հիմք՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ի 12.09.2012 թ-ի անդորրագրերը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ>:

Քննարկվող դեպքում, ինչպես որ վերը նշվել է, ստուգման ակտը Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանին ներկայացվել է 12.07.2012 թ-ին, հետևապես այն ուժի մեջ է մտել ներկայացվելուն (իրազեկելուն) հաջորդող օրվանից:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 11.07.2012 թ. թիվ 2115130 ստուգման ակտով առաջադրված տուգանքի վճարումը Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանի կողմից կատարվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի վերջին պարբերությամբ սահմանված երկամսյա ժամկետում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Քրիստինե Ներսիսյանի անձնական հաշվի քարտից նվազեցնել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 11.07.2012թ. թիվ 2115130 ստուգման ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ